

**ՆԱՍԱԿ ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**  
**Ստեփանավան քաղաքի (Հայաստանի Հանրապետություն) և**  
**Դեսին-Շարայիո քաղաքի (Ֆրանսիայի Հանրապետություն) միջև**

**2024-2027թթ. համար**

**Ստեփանավան քաղաքը** (Հայաստանի Հանրապետություն), մի կողմից՝  
ի դեմս քաղաքապետ Արմեն ԳՐԻԳՈՐՅԱՆԻ.

և

**Դեսին-Շարայիո քաղաքը** (Ֆրանսիայի Հանրապետություն), մյուս կողմից՝  
ի դեմս քաղաքապետ Լորենս ՖՈԹՐԱՅԻ

կնքում են սույն **ՆԱՍԱԿԸ ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ.**

- **Նկատի ունենալով** ֆրանսիացի և հայ ժողովուրդների պատմական կապերը և Ֆրանսիայի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև բարեկամական հարաբերությունները,
- **Նկատի ունենալով** 1991թ. նոյեմբերի 16-ին Ստեփանավանում քույր քաղաքների համաձայնագրի ստորագրումից ի վեր Ստեփանավան և Դեսին-Շարայիո քաղաքների միջև գոյություն ունեցող բարեկամական կապերը, ինչպես նաև 1992թ. ապրիլի 11-ին Դեսին-Շարայիոյում ստորագրված Համագործակցության համաձայնագիրը,
- **Նկատի ունենալով** Ստեփանավան և Դեսին-Շարայիո քաղաքների միջև 2014-2017թթ. համար ապակենտրոնացված համագործակցության համաձայնագիրը, որը ստորագրվել է 2014թ. հոկտեմբերի 11-ին Ստեփանավանում,
- **Նկատի ունենալով** իրենց քաղաքների և բնակիչների ցանկությունը՝ գործելու համատեղ՝ հանուն համերաշխության և ֆրանս-հայկական ապակենտրոնացված համագործակցության ամրապնդման նպատակով,
- **Դիմակայելով** ընդհանուր մարտահրավերներին և գիտակցելով մեր պատասխանատվությունը ապագա սերունդների հանդեպ.

Որոշում են և հայտարարում.

**ՀՈՂԱԿԾ 1 - Համաձայնագրի նպատակը**

Սույն համաձայնագիրը նպատակ ունի ստեղծել բարենպաստ միջավայր Ստեփանավան և Դեսին-Շարայիո քաղաքների միջև ապակենտրոնացված համագործակցության զարգացման համար՝ ի շարունակություն 2014-2017թթ. ապակենտրոնացված համագործակցության համաձայնագրում հռչակված նպատակների և մեր բնակիչների ու համայնքների միջև երկարաժամկետ կապեր ստեղծելու նպատակով՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի իրավասություններն ու պարտավորությունները:

**ՀՈՂԱԿԾ 2 - Համագործակցության ոլորտները**

Սույն Համաձայնագրով համագործակցությունը կկենտրոնանա հետևյալ ոլորտների վրա.

- Պատասխանատու զբոսաշրջություն,
- Ֆրանսերեն լեզվի դասավանդում և ֆրանկոֆոնիա,
- Ինստիտուցիոնալ փոխանակումներ,
- Տնտեսական և կայուն զարգացում,
- Սոցիալական և առողջապահական ծրագրերի իրականացում,
- Միջմշակութային երկխոսություն:



**ՀՈՂՎԱԾ 3 - Գործողությունների ծրագիր**

Երկու քաղաքները պարտավորվում են նշանակել համագործակցության ընթացքը համակարգող պատասխանատու: Համակարգողներն իրենց իշխանությունների հետ սերտ համագործակցությամբ կմշակեն համագործակցության յուրաքանչյուր տարվա գործողությունների ծրագիրը և կներկայացնեն տարեկան հաշվետվություն ծրագրի իրականացման վերաբերյալ:

**ՀՈՂՎԱԾ 4 - Ֆինանսական պայմաններ**

Սույն Համաձայնագրով նախատեսված յուրաքանչյուր ծրագրի ֆինանսավորման աղբյուրները կքննարկվեն և կորոշվեն համատեղ:

Փոխայցելությունների ժամանակ կկիրառվի ծախսերի բաշխման սկզբունքը, մասնավորապես միջազգային տրանսպորտի ծախսերը կհոգա ընդունվող քաղաքի պատվիրակությունը, իսկ կեցության և ներքին տեղաշարժի ծախսը՝ ընդունող քաղաքը:

**ՀՈՂՎԱԾ 5 - Համաձայնագրի ժամկետը**

Սույն Համաձայնագիրը կնքվում է երեք տարով և ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից: Այն կարող է երկարաձգվել երկու կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

**ՀՈՂՎԱԾ 6 - Համաձայնագրի դադարեցումը**


Կողմերից յուրաքանչյուրը կարող է ցանկացած ժամանակ խզել սույն համաձայնագիրը՝ գործընկերոջը երեք ամիս առաջ տեղեկացնելով այն դադարեցնելու իր ցանկության մասին:

Կատարված է Ստեփանավանում, 2024թ. սեպտեմբերի 23 - ին, երկու բնօրինակով, ֆրանսերեն և հայերեն:


Ստեփանավան  
քաղաքի անունից

Դեսին-Շարպիո  
քաղաքի անունից  
(ենթակա է քաղաքային խորհրդի  
կողմից հաստատման՝ 2024թ.  
հոկտեմբերի 3-ին)

Արմեն ԳՐԻԳՈՐՅԱՆ  
Ստեփանավանի քաղաքապետ  
քաղաքապետ



Լորանս ՖՈԹՐԱ  
Դեսին-Շարպիոյի



**LETTRE D'INTENTION**  
**entre la ville de Stepanavan (République d'Arménie) et**  
**la ville de Décines-Charpieu (République française)**

**pour 2024-2027**

La ville de Stepanavan (République d'Arménie), d'une part, représentée par  
son Maire Monsieur Armen GRIGORYAN,

Et

La ville de Décines-Charpieu (République française), d'autre part, représentée par  
son Maire Madame Laurence FAUTRA

Concluent la **LETTRE D'INTENTION** qui suit :

- **Considérant** les relations historiques entre les peuples français et arménien et les liens d'amitié entre la République française et la République d'Arménie ;
- **Considérant** les liens d'amitié existants entre les villes de Stepanavan et Décines-Charpieu depuis la signature de l'accord de jumelage le 16 novembre 1991 à Stepanavan, ainsi que l'Accord de coopération signé le 11 avril 1992 à Décines-Charpieu ;
- **Considérant** l'Accord de coopération décentralisée entre les villes de Stepanavan et Décines-Charpieu pour les années 2014-2017, signé le 11 octobre 2014 à Stepanavan ;
- **Considérant** la volonté de nos villes et de nos habitants d'agir ensemble au nom de la solidarité et dans le but du renforcement de la coopération décentralisée franco-arménienne ;
- **Confrontés à** des défis communs et conscients de notre responsabilité vis-à-vis des générations futures :

Décident et déclarent :

**ARTICLE 1 – Objet de l'Accord**

Le présent accord vise à créer un environnement favorable au développement de la coopération décentralisée entre les villes de Stepanavan et de Décines-Charpieu dans la continuité des objectifs énoncés dans l'Accord de coopération décentralisé 2014-2017 et dans le but de créer des liens durables entre nos communes et nos habitants tenant compte des compétences et des engagements de chacun.

**ARTICLE 2 – Domaines de la coopération**

Aux termes du présent Accord, la coopération sera centrée sur les domaines suivants :

- Tourisme responsable,
- Enseignement de la langue française et francophonie,
- Echanges institutionnelles,
- Développement économique et durable,
- Réalisation de projets sociaux et de santé,



- Dialogue interculturel.

### **ARTICLE 3 – Plan d'action**

Les deux villes s'engagent à désigner un coordinateur responsable du suivi de la coopération. Les coordinateurs élaboreront le plan d'action pour chaque année de coopération en liaison étroite avec leurs autorités et présenteront des rapports annuels sur la mise en œuvre des activités.

### **ARTICLE 4 – Conditions financières**

Les sources de financement de chaque projet dans le cadre du présent Accord seront discutées et décidées conjointement.

Lors des visites réciproques, le principe de partage de frais sera appliqué, notamment le transport international sera pris en charge par la délégation de la ville reçue, tandis que les frais de séjour et de déplacements internes seront pris en charge par la ville qui reçoit.

### **ARTICLE 5 – Durée de l'Accord**

Le présent accord est conclu pour trois ans et prend effet à la date de la signature. Il peut être reconduit d'un commun accord des deux parties.

### **ARTICLE 6 – Résiliation de l'Accord**

Chaque partie peut résilier le présent accord à tout moment en informant le partenaire trois mois à l'avance de son souhait de résiliation.


Fait à Stepanavan, le 23 septembre 2024, en deux exemplaires originaux, en langues français et arménien.

Pour la ville de Stepanavan

Pour la ville de Décines-Charpieu

Sous réserve de l'accord du Conseil municipal du 03 octobre 2024

Armen GRIGORYAN  
Maire de Stepanavan



Laurence FAUTRA  
Maire de Décines-Charpieu

